# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**11 հոկտեմբերի 2024 թվական, N 113-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝

համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի հոկտեմբերի 11-ի հերթական թիվ 11 նիստի հետևյալ օրակարգը՝

1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի հոկտեմբերի 11-ի հերթական թիվ 11 նիստի օրակարգը հաստատելու մասին.

1.2 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2024 թվականի ծրագրի փոփոխությունը հաստատելու մասին.

1.3 Ոչ պիտանի գույքը դուրս գրելու մասին.

1.4 Օրինական ճանաչված կառույցները և համապատասխան հողամասերը՝ տվյալ կառույցներն իրականացրած անձանց գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին.

1.5 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող մի քանի հողամասեր օտարելու մասին.

1.6 Հայաստանի հանրապետության լոռու մարզի ալավերդի համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին.

1.7 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին.

1.8 ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Քարկոփ գյուղ, 1-ին փողոց, 1/1 հասցեից բաժանվող գույքերն իրենց տիրապետող ֆիզիկական անձանց նվիրելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 13. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 14. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., հոկտեմբերի 11,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**11 հոկտեմբերի 2024 թվական, N 114-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետի և հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2024 թվականի ծրագրի փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 13. | ՍԻՄՈՆ | ՁԱԽԱՐՈՎ | | | |
| 14. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., հոկտեմբերի 11,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

# Ծ Ր Ա Գ Ր Ի
# Փ Ո Փ Ո Խ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ.
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ԱԼԱՎԵՐԴԻ 2024Թ

1. Տեղեկատվություն համայնքի ազդակիր բնակավայրերի ու դրանց բնապահպանական կամ առողջապահական հիմնախնդիրների վերաբերյալ:

Ալավերդին բազմաբնակավայր համայնք է, որի կազմում ընդգրկված են 3 քաղաքային և 25 գյուղական բնակավայրեր: Ալավերդի համայնքի խոշոր բնակավայրերը ձևավորվել են հանքարդյունաբերության շուրջ: Ալավերդի քաղաքում պղնձաձուլական գործարանը աշխատել է ավելի քան 250 տարի: Թեև այն վերջին տարիներին դադարեցրել է գործունեությունը, սակայն մինչ օրս առկա է գործարանի արտանետումների բացասական (անխուսափելի) ազդեցությունը շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա:

Այսօր էլ համայնքում գործում են հանքարդյունաբերական խոշոր ձեռնարկություններ՝ «Թեղուտ» ՓԲԸ-ն, որն իրականացնում է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքաքարի արդյունահանում ու վերամշակում, և «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ, որը շահագործում է Շամլուղի պղնձի հանքավայրը և զբաղվում հանքանյութի մշակմամբ: Այս ձեռնարկությունների շրջակա միջավայրի վրա ազդեցությունն արտահայտվում է մի քանի ուղղություններով, ինչպիսիք են՝ տեխնոլոգիական ջրերի արտահոսքը, մարդու առողջության համար վտանգավոր գազերի ու փոշու արտանետումներն օդային ավազան և վտանգավոր նյութերի արտահոսքը:

Համայնքի տարածքում է գտնվում նաև Ալավերդու լիցենզավորված աղբավայրը, որը ևս բացասական ազդեցություն ունի մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա:

Վերոնշյալ ազդեցության անմիջական կրողները Թեղուտ, Շնող, Ախթալա, Շամլուղ, Մեծ Այրում, Ալավերդի, Փոքր Այրում և Ճոճկան ազդակիր բնակավայրերի բնակիչներն են ու շրջակա միջավայրը:

Հանքավայրերի երկարամյա շահագործումը, խոշոր պոչամբարների, մկնդեղի թափոնների գերեզմանոցի և կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի առկայությունը, խոշոր բեռնատարների երթևությամբ ծանրաբեռնված համայնքի միջով անցնող միջպետական ավտոճանապարհը, տարածքի անտառների ժամանակին իրականացված հատումները համայնքի բնակչության առողջության և բնության վրա ունեն էական բացասական ազդեցություն:

2. Ծրագրի մշակման համար հիմք հանդիսացած հիմնախնդիրները:

*Առողջապահական*

Համայնքի ազդակիր Թեղուտ բնակավայրում չկան հանգստի գոտիներ և մարզահրապարակներ, իսկ Ալավերդի բնակավայրում դրանք սակավաթիվ են, ինչով պայմանավորված բնակիչների սպորտով զբաղվելու և ակտիվ հանգիստը կազմակերպելու հնարավորություն և մատչելիություն չի ապահովվում: Միևնույն

ժամանակ բնակավայրերում կան տարածքներ, որոնց անբարեկարգ վիճակը բացասական ազդեցություն է ունենում նաև մթնոլորտային օդի մաքրության և պահպանման վրա:

Ներկայիս վիճակը շտկելու, մթնոլորտային օդը մաքուր պահելու, բնակիչների առողջության պահպանման, ամրապնդման, առողջ ապրելակերպի խթանման նպատակով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին, 6-րդ և 11-րդ ենթակետերի (մթնոլորտային օդի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ, բնակավայրերի կանաչ գոտիների պահպանման, վերականգնման, բարելավման միջոցառումներ, առողջ ապրելակերպի խթանում, վարքագծային գործոնների ձևավորում, առողջ ապրելակերպի ձևավորմանն ու խթանմանն ուղղված միջոցառումներ) համաձայն, նպատակահարմար է բնակավայրերի այդ տարածքներում կառուցել մարզահրապարակ/հանգստի գոտիներ:

3. Ծրագրի նպատակը, խնդիրները, ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները (կարճաժամկետ և երկարաժամկետ)

**Ծրագրի նպատակներն են՝**

***Առողջապահական***

- Առողջ ապրելակերպի խթանում:
- Շրջակա միջավայրի աղտոտվածության դեմ պայքար:
- Մթնոլորտային օդի մաքրության պահպանություն:

**Ծրագրի խնդիրներն են՝**

***Առողջապահական***

- Ապահովել առողջ ապրելակերպի և վարքագծային գործոնների ձևավորում:
- Ապահովել մթնոլորտային օդի պահպանությունը, օդի որակի բարելավումը, նվազեցնել օդի աղտոտվածությունը:

**Ծրագրի իրականացումից ակնկալվող կարճաժամկետ արդյունքներն են՝**

***Առողջապահական***

- Առողջ ապրելակերպի համար ստեղծվել են պայմաններ:
- Համայնքում սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար ապահովվել է ֆիզիկական դաստիարակության ու ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու մատչելիություն:
- Ստեղծվել է բարեկարգ համայնքային միջավայր:

**Ծրագրի իրականացումից ակնկալվող երկարաժամկետ արդյունքներն են՝**

***Առողջապահական***

- Նպաստավոր և անվտանգ պայմաններ հանգստի և ժամանցի համար:

- Մթնոլորտային օդում փոշու և մեքենաների արտանետումների արդյունքում օդի աղտոտվածության խտության նվազում:

4. Ծրագրի կատարողականի կանխատեսումը (քանակական և որակական ցուցանիշներ՝ ըստ առանձին միջոցառումների):

*Առողջապահական*

- «Ալավերդի համայնքի Ալավերդի և Թեղուտ բնակավայրերում մարզահրապարակ/հանգստի գոտիների կառուցում» միջոցառում
    - *Ալավերդի բնակավայրում կունենանք շուրջ 480 մ², իսկ Թեղուտ բնակավայրում՝ շուրջ 315 մ² մարզահրապարակ/հանգստի գոտիներ, որի արդյունքում բնակիչները ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու և առողջ ապրելակերպ վարելու հնարավորություն կունենան:*

5. Տեղեկատվություն Ծրագրի շահառուների վերաբերյալ:

*Առողջապահական*

Ծրագրի «Ալավերդի համայնքի Ալավերդի և Թեղուտ բնակավայրերում մարզահրապարակ/հանգստի գոտիների կառուցում» միջոցառման ուղղակի շահառուները Ալավերդի և Թեղուտ բնակավայրի բնակիչներն են՝ թվով 20407 մարդ, ովքեր ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու, առողջ ապրելակերպ վարելու, մաքուր մթնոլորտային օդում լիարժեք հանգիստը կազմակերպելու հնարավորություն կունենան:

6. Կապը տվյալ մարզի կամ համայնքի զարգացման կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերի կամ շրջակա միջավայրի կամ առողջապահության ոլորտներում համայնքի առաջնահերթություններից բխող առաջարկությունների հետ,

*Առողջապահական*

Ծրագրի «Ալավերդի համայնքի Ալավերդի և Թեղուտ բնակավայրերում մարզահրապարակ/հանգստի գոտիների կառուցում» միջոցառման իրականացումը բխում է Ալավերդի համայնքի 2023-2027թթ հնգամյա զարգացման ծրագրից, քանի որ հնգամյա զարգացման ծրագրի «համայնքի զարգացման անմիջական նպատակներ» ենթաբաժնում որպես նպատակ սահմանվել է «ապահովել համայնքի բարեկարգ տեսքը՝ խաղադաշտեր, խաղահրապարակներ, մարզահրապարակներ ու հանգստի գոտիներ նորոգելով և հիմնելով» նպատակը:

7. Տեղեկատվություն՝ Ծրագրի իրականացմանը պետական կառավարման համակարգի մարմինների կամ այլ կազմակերպությունների (այդ թվում՝ միջազգային) մասնակցության վերաբերյալ:

Ծրագրի կազմման փուլում պետական կառավարման համակարգի մարմինների կամ այլ կազմակերպությունների կողմից Ծրագրի իրականացման մասնակցություն չի նախատեսվում:

8. Տեղեկատվություն Ծրագրի համաֆինանսավորման վերաբերյալ (առկայության դեպքում):

Ծրագրի արժեքը 51010900 ՀՀ դրամ է: Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ գնման գործընթացների արդյունքում կնքված պայմանագրային արժեքներից 29001040 ՀՀ դրամը կֆինանսավորվի ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանվող գումարից, իսկ մնացած մասը կհամաֆինանսավորվի Ալավերդի համայնքի բյուջեից:

Ծրագրով նախատեսված միջոցառման իրականացման համար համայնքապետարանը համայնքային միջոցներով ձեռք է բերել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:

9. Ծրագրում ներառված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ թույլատվական փաստաթղթերի պատճենները կամ տեղեկատվություն դրանց ստացման ուղղությամբ իրականացվող կամ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ:

Ծրագրով նախատեսվում է կառուցել մարզահրապարակ/հանգստի գոտիներ, ինչի համար Ալավերդու համայնքապետարանը պետք է մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը տրամադրի շինթույլտվություն: ՀՀ Օրենսդրությամբ սահմանված ժամկետներում Ալավերդու համայնքապետարանը կտրամադրի համապատասխան թույլտվությունները:

10. Ծրագրի միջոցառումների իրականացման առաջնայնությունները:

Կցվում է՝ Հավելված 1:

11. Ծրագրի արժեքը (ըստ միջոցառումների):

Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2024 թվականի ծրագրի ընդհանուր արժեքը 51010900 ՀՀ դրամ է, որից՝

- Ծրագրի «Ալավերդի համայնքի Ալավերդի և Թեղուտ բնակավայրերում մարզահրապարակ/հանգստի գոտիների կառուցում» միջոցառման իրականացման համար կառուցման աշխատանքներ (ներառյալ հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայություն)՝ 51010900 ՀՀ դրամ (ծավալաթերթ-նախահաշիվը կցվում է):

Ծրագրի իրականացման հիմքերը

Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2024թ. ծրագիրը կազմվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ-188 օրենքի, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանվող գումարների հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերի մշակման կարգը սահմանելու մասին» Շրջակա միջավայրի նախարարի 2023թ. սեպտեմբերի 4-ի N 310-Ն հրամանի, «Բնապահպանական ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները կամ դրանց փոփոխությունները շրջակա միջավայրի ոլորտի և առողջապահության ոլորտի լիազոր մարմինների հետ համաձայնեցման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի N 1544-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության 2023թ. օգոստոսի 24-ի N 1421-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի (Հոդված 12՝ Համայնքի պարտադիր խնդիրները) պահանջներին համապատասխան:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible] ՂՈՒՄԱՇՅԱՆ

Ալավերդի համայնքի ավագանու
2024 թվականի հոկտեմբերի 11-ի
N 114-Ա որոշման

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Գումարը (հազար. դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | Բնապահպանական մասհանում | Համայնք |
| 1 | Առողջապահական | 51 010,90 | 29 001,04 | 22 009,86 |
| 1.1. | Ալավերդի համայնքի Ալավերդի և Թեղուտ բնակավայրերում մարզահրապարակ/հանգստի գոտիների կառուցում | 51 010,90 | 29 001,04 | 22 009,86 |
| | Ընդամենը | 51 010,90 | 29 001,04 | 22 009,86 |

Ալավերդի համայնքի ղեկավար Դ. Ղումաշյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

**11 հոկտեմբերի 2024 թվական, N 115-Ա**

## ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԸ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Ճոճկանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Սաթենիկ Մամաջանյանի զեկուցագիրը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. «Ճոճկանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գույքացանկից և հաշվեկշռից դուրս գրել մաշված, օգտագործման համար ոչ պիտանի գույքը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | [signature] | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | [signature] | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | [signature] | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | [signature] | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | [signature] | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 13. | ՍԻՄՈՆ | ՁԱԽԱՐՈՎ | | | |
| 14. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., հոկտեմբերի 11,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հավելված
Ալավերդի համայնքի ավագանու
2024 թվականի հոկտեմբերի 11-ի
N 115-Ա որոշման

# ՑԱՆԿ
# «ՃՈՃԿԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԳՈՒՅՔԱՑԱՆԿԻՑ ԵՎ ՀԱՇՎԵԿՇՌԻՑ ԴՈՒՐՍ ԳՐՎՈՂ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԻ

## ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Էլեկտրական սալօջախ | 1x14601=14601 |
| 2. | Էլեկտրական սալօջախ | 2x34290.5=68581 |
| 3. | Մսաղաց | 1x38000=38000 |
| 4. | Սառնարան | 1x28347=28347 |
| 5. | Էլեկտրական սալօջախ | 3 |

## ՄԱՆՐԱՐԺԵՔ ԳՈՒՅՔ

| | | |
|---|---|---|
| 1. | Գրապահարան | 1x263=263 |
| 2. | Սեղան | 1x55=55 |
| 3. | Սեղան | 7x101=707 |
| 4. | Պահարան խոհանոցի | 1x161=161 |
| 5. | Սեղան խոհանոցի երկփեղկ | 3x440=1320 |
| 6. | Սեղան ուղղանկյուն | 1x66=66 |
| 7. | Պահարան | 1x281=281 |
| 8. | Կշեռք սլաքով | 1x107=107 |
| 9. | Գրասեղան | 4x308=1232 |
| 10. | Պահարան մանկական հագուստի | 4x281=1124 |

## ՓԱՓՈՒԿ ԳՈՒՅՔ

| | | |
|---|---|---|
| 1. | Հատակի գորգ | 4 մx6121=24484 |
| 2. | Հահակի գորգ | 24 մx3100=74400 |
| 3. | Հատակի գորգ | 20 մ /նվիրատվություն/ |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**11 հոկտեմբերի 2024 թվական, N 116-Ա**

## ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ՝ ՏՎՅԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջներով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 27.08.2024թ. N 1334-Ա, 05.09.2024թ. N 1331-Ա, 27.08.2024թ. N 1335-Ա 09.01.2024թ. N 62-Ա և 08.09.2024թ. N 1377-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 13092024-06-0038 (գաղտնաբառ՝ 7AAGREARFPUK), N 13092024-06-0045 (գաղտնաբառ՝ JB1K1EHDNKBE), N 13092024-06-0084 (գաղտնաբառ՝ XJSZQ7NCDJ2G), N 26092024-06-0023 (գաղտնաբառ՝ YTKR5HSBJFE3) վկայականները, հաշվի առնելով, որ կառույցներն իրականացրած անձանց կողմից ընդունվել են ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Բաղրամյան թաղամաս, 4/1 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 27.08.2024թ. N 1334-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 79.1 քմ արտաքին մակերեսով նկուղով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00493 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0004-0008/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Արման Զավենի Միքայելյանին:
2. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի Սանահին Սարահարթ թաղամաս, Գ. Օսիպյան փողոց, 16 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 05.09.2024թ. N 1331-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 37.6 քմ արտաքին մակերեսով նկուղով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և

սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00308 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0054-0129/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Սվետլանա Մամիկոնի Փարեմուզյանին:

3. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի Սանահին Սարահարթ թաղամաս, 23/4 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 27.08.2024թ. N 1335-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 62.3 քմ արտաքին մակերեսով նկուղով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00536 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0150-0078/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Լիդա Ջանիբեկի Սիմոնյանին:
4. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի Սանահին Սարահարթ թաղամաս, Գայի փողոց, 5/10 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 09.01.2024թ. N 62-Ա և 08.09.2024թ. N 1377-Ա որոշումներով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 65.6 քմ արտաքին մակերեսով խանութը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00367 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0151-0169/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Արարատ Վեյսարի Մանուկյանին:
5. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կառույցներն իրականացրած անձանց հետ կնքելու կառույցի և զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրեր:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | [signature] | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | [signature] | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | [signature] | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | [signature] | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | [signature] | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 13. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 14. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., հոկտեմբերի 11,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**11 հոկտեմբերի 2024 թվական, N 117-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով N 13092024-06-0043 վկայականը, Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամաս, Գայի փողոց 4/8 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0150-0424 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00045 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:
   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող, Ալավերդի քաղաք, Սպանդարյան փողոց, 10/1 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0038-0519 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.01473 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:
   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:
3. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր,

գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեքներ կայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:
5. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասերի աճուրդը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 13. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 14. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., հոկտեմբերի 11,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

**11 հոկտեմբերի 2024 թվական, N 118-Ն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ի գիտություն ընդունել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | [signature] | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | [signature] | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | [signature] | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԶԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ՀԱՅԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 13. | ՍԻՄՈՆ ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 14. | ՆԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., հոկտեմբերի 11,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հավելված
Ալավերդի համայնքի ավագանու
2024 թվականի հոկտեմբերի 11-ի
N 118-Ն որոշման

# Հաշվետվություն Ալավերդի համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ (02/01/24 - 30/09/24թ. ժամանակահատվածի համար)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի համար | Տարեկան պլան | Եռամսյակային պլան | Փաստացի | Եռամսյակի նկատմամբ% | տարվա նկատմամբ% |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 7 | | 10 | | |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300) | | 4840804,0 | 4709744,1 | 2921709,1 | 62,0 | 60,4 |
| 1100 | այդ թվում` 1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1140 + տող 1150) | 7100 | 357295,7 | 267971,8 | 185309,6 | 69,2 | 51,9 |
| 1110 | այդ թվում` 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112 + տող 1113) | 7131 | 89116,8 | 66837,6 | 48100,9 | 72,0 | 54,0 |
| 1111 | այդ թվում` Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | | 0,0 | 0,0 | 815,3 | | |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | | 10578,0 | 7933,5 | 9114,6 | 114,9 | 86,2 |
| 1113 | Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ | | 78538,8 | 58904,1 | 38170,9 | 64,8 | 48,6 |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 7136 | 238302,6 | 178726,9 | 111363,3 | 62,3 | 46,7 |
| 1121 | այդ թվում` Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 238302,6 | 178726,9 | 111363,3 | 62,3 | 46,7 |
| 1130 | 1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310 + տող 11311+տող 11312+ տող 11313 + տող 11314+տող 11315+ տող 11316 + տող 11317+ տող 11318 + տող 11319), այդ թվում` | 7145 | 19876,4 | 14907,3 | 16567,6 | 111,1 | 83,4 |
| 11301 | Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար | | 617,5 | 463,1 | 1286,5 | 277,8 | 208,3 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 11302 | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքներ կատարելու թույլտվության համար | | 18,0 | 13,5 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 11303 | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | | 20,0 | 15,0 | 15,0 | 100,0 | 75,0 |
| 11304 | Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրլեռն. համայնք-ի վարչ. տարածքում, բացառ. միջպետ. և հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի կողեզրում, խանութ-ում և կրպակ-երում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . [illegible] | | 2940,0 | 2205,0 | 2547,5 | 115,5 | 86,6 |
| 11306 | Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար | | 350,0 | 262,5 | 350,0 | 133,3 | 100,0 |
| 11307 | Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար | | 12513,4 | 9385,1 | 7476,5 | 79,7 | 59,7 |
